ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Վերջին թարմացումը՝ 18 դեկտեմբերի, 2019թ.:

Խնդրում ենք ուշադիր ծանոթանալ սույն Օգտագործման պայմաններին, որոնք վերաբերում են **Alamo Rent-A-Car** վեբ կայքից օգտվելուն:

1. Alamo-ի կողմից մատուցվող ծառայություններ: Ծառայությունների ծավալ: Տվյալների պաշտպանություն

1.1. Այս վեբ կայքը անվճար տրամադրվում է JMS LLC («Alamo»)-ի կողմից՝ իր մասնաճյուղերին և դրանց լիցենզառուներին/ֆրանչայզիներին, ովքեր օգտվում են Alamo Rent-A-Car համակարգից ամբողջ աշխարհում:

1.2. Կայքը մատուցում է հետևյալ ծառայությունները՝

ա) Ապահովում է կայքի պարզ և հարմար օգտագործելի պարամետրեր՝ համաձայն սույն Օգտագործման պայմանների

բ) Տրամադրում է տեղեկություն առկա փոխադրամիջոցների, դրանք ստանալու վայրի, վարձակալության սակագների և մեքենա վարձակալելու համար գործող հատուկ առաջարկների մասին այն երկրներում, որտեղ գործում են Alamo և իր մասնաճյուղերը կամ ֆրանչայզիները:

գ) Թույլ է տալիս պատվիրատուներին ձևակերպել տրանսպորտային միջոցների ամրագրման պատվերներ

դ) Թույլ է տալիս պատվիրատուներին որոշ դեպքերում, ձևակերպել կանխավճարային պատվերներ:

1.3. Alamo-ը մտադրված է մշտապես պահպանել կայքը. Այնուամենայնիվ, դրանից չի բխում, որ օգտատերերը հետագայում կկարողանան կայքից օգտվել: Վեբ կայքը փակելու դեպքում՝ Alamo-ը նախօրոք կտեղեկացնի իր օգտատերերին՝ վեբ կայքում տեղադրելով համապատասխան հայտարարությունը:

1.4. Alamo-ը իրեն իրավունք է վերապահում կատարել փոփոխություններ, ավելացնել կամ պակասեցնել բովանդակության (կոնտենտի) ծավալը, վեբ կայքի կառուցվածքը կամ դիզայնը:

1.5. Alamo-ը չի երաշխավորում կայքի հասանելիությունը ոչ ժամանակային, ոչ աշխարհագրական առումով: Alamo-ը կարող է ժամանակավորապես նվազեցնել վեբ կայքի օգտագործման հարմարությունը, առանձին գործառույթները և տեղեկատվության հասանելիությունը, բավականաչափ իրավական կամ տեխնիկական հիմքերի առկայության դեպքում: Տեխնիկական պատճառները ներառում են, մասնավորապես, տեխնիկական սպասարկումը, հիմնական համակարգչային ծրագրերի թարմացումը և կայքի անվտանգության կամ ամբողջականության ապահովումը:

1.6. Անձնական տվյալների հավաքագրման, կուտակման և օգտագործման, ինչպես նաև վեբ կայքի օգտագործման կարգին կարող եք ծանոթանալ Գաղտնիության քաղաքականություն բաժնում (https://alamo.am/terms-of-use), որը հասանելի է վեբ կայքում:

2. Ամրագրման հայտ

2.1. Այս կայքը նախատեսված է բացառապես տեղեկատվության և ամրագրման համար: Այն հնարավորություն չի տալիս կնքել վարձակալության պայմանագրեր: Վարձակալության պայմանագրերը կնքվում են միայն Alamo-ի բաժանմունքներում, մասնաճյուղերում և համապատասխան ֆրանչայզիներում: Հասցեներին և կոնտակտային տվյալներին կարող եք ծանոթանալ սույն կայքում:

2.2. Վեբ կայքը առաջարկում է ամրագրման երկու տարբերակ 1) կանխաճարային ամրագրում՝ որտեղ դա հասանելի է. պարտադիր ամրագրում Pay Now-ի կանոններին ու պայմաններին համապատասխան, կամ 2) ոչ պարտադիր ամրագրման հայտեր: Ցանակացած կողմ, անակխ ամրագրումը հաստատված լինելուց, որևէ պատճառով կամ առանց պատճառ, ըստ սեփական հայեցողության և առանց մյուս կողմի հանդեպ որևէ պարտավորության, կարող է չեղարկել ամրագրումը, բացի կանխավճարային հայտերից:

3. Օգտատիրոջ հաշիվ

3.1. Վեբ կաիքից օգտվելու և հասանելի տեղեկատվություն ստանալու համար օգտատերը պարտավոր չէ գրանցվել, ինչպես նաև ձևակերպել ամրագրումներ կամ կանխավճարային ամրագրումեր:

4. Օգտատիրոջ պարտավորությունները և օգտագործման պայմանների խախտման հետևանքները:

4.1. Վեբ կայքը և համապատասխան տվյալների շտեմարանը կարող են օգտագործվել միայն Alamo-ի կողմից նախատեսված կարգի համաձայն: Մասնավորապես տեղեկատվությունը հնարավոր է դիտել միայն Alamo-ի վեբ կայքերի միջոցով՝ ցանցային դիտարկիչի օգնությամբ:

4.2. Արգելվում է՝

1. Ուղարկել կամ հասանելի դարձնել ցանկացած վիրուսներ կան այլ վնասակար ծրագրեր:
2. Ձեռնարկել միջոցներ, որոնք կարող են բացասաբար ազդել կամ խափանել Alamo-ի կայքերի կամ օգտատերերի համկարգչային ծրագրերի աշխատանքը կամ գործառույթները:

3. Խափանել կամ անարդյունավետ դարձնել կայքի որևէ գործառույթ (օրինակ՝ որոնման ձևերը) կամ այլ ձևով խոչընդոտել Alamo-ի կայքին.

4. Ձեռնարկել միջոցներ, որոնք կարող են բերել Alamo-ի կայքի ենթակառուցվածքի գերբեռնման:

5. Արգելափակել, արտագրել կամ ձևափոխել Alamo-ի կողմից ստեղծված բովանդակությունը (կոնտենտը):
6. Օգտագործել ավտոմատ գործառույթներ (օրինակ՝ ալգորիթմներ և մեխանիզմներ) տրանսպորտային միջոցներ որոնելու կամ տրանսպորտային միջոցներ վարձակալելու քվոտաներ ձեռք բերելու նպատակով:
7. Հավաքել կամ որևէ այլ միջոցով ձեռք բերել և պահպանել տեղեկատվություն այլ օգտատերերի մասին առանց իրենց համաձայնության, հատկապես էլեկտրոնային փոստի հասցեներ:
8. Ձեռք բերել ցանցերի չարտոնված մուտքի իրավունք :

4.3. Եթե առկա է Օգտագործման պայմանների, օրենքի կամ երրորդ անձի իրավունքների խախտման հիմնավորված կասկած, Alamo-ը իրեն իրավունք է վերապահում `

• պաշտոնական զգուշացում անել օգտատերին

• ժամանակավորապես սահմանափակել կամ արգելափակել օգտատերի կայքից օգտվելու հնարավորությունը

• ընդմիշտ արգելափակել կամ արգելել օգտատիրոջ մուտքը:

5. Alamo-ի մտավոր սեփականությունը

5.1. Վեբ կայքի բովանդակությունը, կառուցվածքը, դասավորությունը, ինչպես նաև ծրագրային կոդը հանդիսանում են Alamo-ի սեփականություն: Մտավոր սեփականության բոլոր իրավունքները (օրինակ՝ ապրանքային նշանը, հեղինակային իրավունքները, տվյալների շտեմարանին առնչվող իրավունքները) պատկանում են Enterprise Holdings Inc. («EHI»)-ին և իր մասնաճյուղերին:

5.2. Վեբ կայքի առանձին դրույթներ, մասնավորապես մեքենաների վարձակալության առաջարկները և ամրագրման հայտերը, կարող են ներբեռնվել, տպվել և պատճենահանվել օգտատիրոջ կողմից միայն ոչ կոմերցիոն նպատակներով:

5.3. Վերոհիշյալ գործողություններից զատ այլ գործողություններ, մասնավորապես խմբագրում, պատճեն, տարածում կամ ցանկացած այլ հրապարակում արգելված է առանց նախօրոք ձեռք բերված EHI-ի գրավոր թույլտվության, որը կարելի է ստանալ հետևյալ հասցեով՝ nicadmin@enterprise.com.

5.4. Եթե Դուք գտնում եք, որ կայքում տեղադրված նյութը խախտում է Ձեր մտավոր սեփականության իրավունքը, խնդրում ենք կապվել EHI-ի Մտավոր սեփականության կառավարչի, Մտավոր սեփականության հարցերի բաժնի հետ հետևյալ հասցեով՝600 Corporate Park Drive, Սենթ Լուիս, Միսսուրի 63105, կամ nicadmin@enterprise.com. Խնդրում ենք ներառել (1) հեղինակային իրավունքի կամ սեփականության այլ ձևերի սեփականատիրոջ անունից գործելու լիազորված անձի էլեկտրոնային կամ ֆիզիկական ստորագրությունը, (2) հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող աշխատանքի կամ այլ պաշտպանված նյութի նկարագրություն, որի սեփականության իրավունքը ըստ Ձեզ խախտվել է, (3) վեբ կայքում նյութի տեղադրության նկարագրություն, (4) Ձեր հասցեն, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն, (5) Ձեր դիմումը առ այն, որ վիճելի օբյեկտի օգտագործումը թույլատրված չէ հեղինակային իրավունքի կամ իրավունքի այլ ձևերի սեփականատիրոջ, նրա գործակալի կամ օրենքի կողմից, (6) Ձեր դիմումը, արված կեղծ վկայության պատժելիության գիտակցմամբ այն մասին, որ Ձեր ծանուցման մեջ ներառված տեղեկությունը հավաստի է և որ Դուք հանդիսանում եք սեփականության իրավունքի կամ իրավունքի այլ ձևերի սեփականատերը կամ լիազորված եք գործել սեփականատիրոջ անունից:

5.5. Alamo Rent-A-Car ապրանքանիշը ներառված է ապրանքային և սպասարկման նշանների խմբի մեջ, որը պատկանում են EHI-ին և իր լիցենզառուներին (սույն ցանկը չի ներառում EHI-ի ապրանքային և սպասարկման նշանների ամբողջությունը): Ապրանքային և սպասարկման նշանները կրում են «®» խորհրդանիշը, գրանցված են ԱՄՆ արտոնագրերի և ապրանքային նշանների վարչության և բազմաթիվ այլ օտար երկրների կողմից: EHI-ին պատկանող այլ ապրանքային և սպասարկման նշանները կարող են նշված լինել «SM» կամ

«TM» խորհրդանիշներով: EHI-ի ապրանքային կամ սպասարկման նշանները չեն կարող օգտագործվել որևէ ապրանքի կամ ծառայության հետ կապված՝ առանց նախօրոք ձեռք բերված EHI-ի թույլտվության: Բոլոր այլ բրենդերը, ապրանքային նշանները կամ անվանումները, որոնք առկա են կայքում, բայց չեն պատկանում EHI-ին, հանդիսանում են իրենց համապատասխան սեփականատերերի սեփականությունը , վերջիններս կարող են հանդիսանալ կամ չհանդիսանալ EHI-ի գործընկեր, կապված լինել EHI-ի հետ, կամ ունենալ հավանություն EHI-ի կողմից:

6. Պատասխանատվության սահմանափակում

6.1. Վեբ կայքը տրամադրում է Alamo-ի կամ երրորդ կողմի մասնաճյուղը հանդիսացող կազմակերպությունների վեբ կայքերի հղումներ: Alamo-ը պատասխանատվություն չի կրում հղումների տրամադրած տեղեկատվության կամ դրանց կողմից մատուցած ծառայությունների բնույթի, ապահովության կամ օրինականության համար:

6.2. Alamo-ը պատասխանատվություն չի կրում Alamo-ի գործընկերների և երրորդ անձանց կողմից տրամադրված ցանկացած գովազդի և տեղեկատվության համար:

6.3. Alamo-ը պատասխանատվություն է կրում կանխամտածված և անփույթ գործողությունների համար:

6.4. Alamo-ը պատասխանատվություն է կրում պարզ անփութության համար միայն այն դեպքերում, երբ վնաս է հասցվել կյանքին, առողջությանը կամ խախտվել են պայմանագրային էական պարտավորությունները: Պայմանագրային էական պարտավորությունների խախտման դեպքում Alamo-ի պատասխանատվությունը սահմանափակվում է նմանատիպ պայմանագրերով վնասի փոխհատուցման նախատեսված չափով : Պայմանագրով սահմանված հիմնական պարտավորությունների կատարումը անհրաժեշտ պայման է կնքված պայմանագրով նախատեսված նպատակներին հասնելու համար, ինչը օգտատերը կարող է միշտ պահանջել:

6.5. Alamo-ը պատասխանատու չէ արտակարգ հանգամանքների (ֆորս մաժոր) դեպքում, հատկապես մեր կամքից անկախ համակարգչային, լարային մալուխային ցանցի խզումների ժամանակ:

6.6. Alamo-ը պատասխանատվություն է կրում միայն տվյալների կորստի դեպքում, ինչպես նշված է 6.3 և 6.4 կետերում, եթե տվյալների կորուստը չէր կարող կանխված լինել օգտատիրոջ կողմից համապատասխան անվտանգության միջոցներ ձեռնարկելու դեպքում :

6.7. Վերոնշյալ սահմանափակումները համապատասխանաբար կիրառելի են նաև Alamo-ի օրինական ներկայացուցիչների և գործակալների համար:

7. Պատասխանատվության բաշխում/ հրաժարում պատասխանատվությունից

7.1. Սույն Պայմանների առանձին դրույթների անվավեր լինելը կամ անվավեր դառնալը չի ազդում մնացած այլ դրույթների վավերականության վրա: Alamo-ի կողմից Օգտագործման պայմանների դրույթներից մեկը չկատարելը հիմք չի հանդիսանում, որ վերջինս հրաժարվի այս կամ որևէ այլ դրույթից:

8. Կիրառվող օրենսդրություն

8.1. Եթե Դուք մուտք եք գործում վեբ կայք ձեր մշտական բնակավայր հանդիսացող երկրից, սույն Օգտագործման կանոնները վերահսկվում են վերջինիս օրենսդրությամբ: Այլապես, սույն Օգտագործման պայմանները կարգավորվում են Անգլիայի և Ուելսի օրենդրությամբ: Ապրանքների միջազգային առևտրի մասին ՄԱԿ-ի համաձայնագիրը կիրառելի չէ:

8.2. Օգտագործման պայմանների հետ կապված ցանկացած հարցի դեպքում, խնդրում ենք, դիմեք մեզ հետևյալ հասցեով՝ nicadmin@enterprise.com.

8.3. Վեճերի լուծման Եվրոպական Հանձնաժողովի հաշտարարի առցանց հարթակը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://ec.europa.eu/consumers/odr/. Alamo-ը չի մասնակցում վեճերի լուծման այլընտրանքային գործընթացներին: